ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 89-Ա **12 փետրվարի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին. 2-րդ և 3-րդ կետերի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի հունվարի 23-ի «Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը, հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 4-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելված N 1-ը՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կազմը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) որոշման 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման միջոցառումների իրականացման վերահսկողությունը վերապահել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը:»"

3) որոշման 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Վահան Զարոյանին:».

4) որոշման հավելված N 2-ի՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի կանոնադրության «մարզպետարանի աշխատակազմ» բառերն իր հոլովներով փոխարինել «մարզպետի աշխատակազմ» բառերով՝ իր հոլովներով.

5) որոշման հավելված N 2-ի «ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն» բառերն իր հոլովներով փոխարինել «ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայություն» բառերով՝ իր հոլովներով.

6) որոշման հավելված N 2-ի տեքստից հանել «ՀՀ Նախագահի հրամանագրերով» բառերը:

12.02.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի փետրվարի 12 - ի
N 89-Ա որոշման

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի հունվարի 23 - ի
N 4 - Ա որոշման

Կ Ա Զ Մ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Վահան Զարոյան - Գեղարքունիքի մարզպետի տեղակալ,
հանձնաժողովի **նախագահ**
Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, **հանձնաժողովի նախագահի տեղակալ**
/համաձայնությամբ/
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար,
հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ալբերտ Աղեկյան - Գեղարքունիքի մարզպետի խորհրդական
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, **հանձնաժողովի քարտուղար**
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Քաղաքացիական պաշտպանության Գեղարքունիքի մարզային ծառայությունների պետեր

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավար / համաձայնությամբ/
Գեղարքունիքի մարզին Ճամբարակ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի պետ /համաձայնությամբ/
«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Մարտունու էլցանցի պետ /համաձայնությամբ/
«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Սևանի էլցանցի պետ /համաձայնությամբ/
«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Վարդենիսի էլցանցի պետ /համաձայնությամբ/
«ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի Ճամբարակի էլցանցի պետ /համաձայնությամբ/

«Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ Գավառի ԳԳՄ տնօրեն /համաձայնությամբ/
«Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ Մարտունու և Վարդենիսի ԳԳՄ տնօրեն /համաձայնությամբ/

«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Գավառ» շահագործման տեղամասի պետ /համաձայնությամբ/
«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Մարտունի» շահագործման տեղամասի պետ /համաձայնությամբ/
«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Ճամբարակ» շահագործման տեղամասի պետ /համաձայնությամբ/
«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Վարդենիս» շահագործման տեղամասի պետ /համաձայնությամբ/
«Վեոլիա ջուր» ՓԲԸ «Հարավ» շահագործման տնօրինության «Սևան» շահագործման տեղամասի պետ /համաձայնությամբ/

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գեղարքունիք» ցանցային շահագործման թիմի ղեկավար /համաձայնությամբ/
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գեղարքունիք» ցանցային շահագործման առաջատար ճարտարագետ, ք. Սևան /համաձայնությամբ/
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գեղարքունիք» ցանցային շահագործման առաջատար ճարտարագետ, ք. Մարտունի /համաձայնությամբ/
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գեղարքունիք» ցանցային շահագործման առաջատար ճարտարագետ, ք. Վարդենիս /համաձայնությամբ/

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ «Գեղարքունիք» ցանցային շահագործման առաջատար

ճարտարագետ, ք. Ճամբարակ /համաձայնությամբ/

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան տարածքային
կենտրոնի պետ /համաձայնությամբ/
ԱՆ ՀՎԿԱԿ «Գեղարքունիք» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Ռազմական դրության պայմաններում զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների ղեկավարներ:»:

12.02.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ